ՊԵՏԱԿԱՆ ԱԳԵՆՏՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (1992-2004 ԹԹ.)[1]

ԷԴԳԱՐ ԷԼԲԱԿՅԱՆ, ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

Բանալի բառեր - Քաշաթաղ, վերաբնակեցում, ազատագրված տարածքներ, իշխանական հարաբերություններ, սոցիալական փաստ, Էմիլ Դյուրկհայմ, Բերձոր, ՀՀՇ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի պատմության նորագույն փուլում, որը լի է քաղաքական ու սոցիալ-մշակութային ահռելի տեղաշարժերով, առանցքային տեղ են զբաղեցնում Ղարաբաղյան շարժումը, Արցախի Հանրապետության ստեղծումը և դրանցից բխող ռազմաքաղաքական, հասարակական և ժողովրդագրական վերաձևումները:

Այդ գործընթացներն ազդել են նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ ներհասարակական տրամադրությունների շարժընթացի վրա: Մասնավորապես՝ 2000-ական թվականների կեսից կարելի է արձանագրել նախկին արտալլիմյան տարածքների վերաբերյալ հայաստանյան հանրային ընկալման մեծ փոփոխություն[2]: Նշված գործընթացի հիմքում ընկած էին ոչ միայն հասարակական-քաղաքական և ինքնութենական սերնդափոխությունը, այլև նախորդ տասնամյակում (1992-2004 թթ.) տեղի ունեցած վարչական և ժողովրդագրական մեծ փոփոխությունը՝ Արցախի Հանրապետության Քաշաթաղի և Շահումյանի (Քարվաճառի)

---

[1] *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 20TTSH-074 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

[2] 2004 թ.-ից մինչև 2017 թ. ՀՀ-ում և Արցախում անցկացված սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ ազատագրված տարածքների զիջումը՝ որպես ԼՂ հակամարտության լուծման եղանակ կամ մաս, ընդունելի տեսակետից աստիճանաբար վերածվել է մարգինալ մոտեցման: Այսպես՝ եթե 2004 թ.-ին հարցվածների 32.4% էր դեմ տարածքային զիջումներին, ապա 2017 թ.-ին՝ 86.4% (տե՛ս **Mikaelian Hrant**, Societal Perceptions of the Conflict in Armenia and Nagorno-Karabakh, Yerevan, 2017 թ., էջ 28, http://c-i.am/wp-content/uploads/2017-Karabakh-Working-Paper.pdf (հղվել է 27.08.2022 թ.)): Տե՛ս նաև IPSC – Institute for Political and Sociological Consulting, Opinion polls in Nagorno-Karabakh: Comparative results from 2015 and 2016, Armenia, 2016 թ., էջք 44; 49, http://eufoa.org/wp-content/uploads/2016/12/Comparative-opinion-polls_2015-2016_17.11.2016_Website_ Eng-2.pdf (հղվել է 27.08.2022 թ.):

շրջանների ստեղծումը և 1994 թ-ից այնտեղ սկսված կանոնավոր վերաբնակեցման գործընթացը։

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից և ծավալված ռազմական գործողություններից հետո հայկական կողմի փաստացի ենթակայության և 2006 թվականից՝ արցախյան ներպետական օրենսդրությամբ երկրի իրավազորության տակ անցան նախկին Ադրբեջանական ԽՍՀ Քյալբաջարի, Լաչինի, Ղուբաթլուի, Զանգելանի (ամբողջությամբ), Ջաբրայիլի, Ֆիզուլու և Աղդամի (մասամբ) շրջանների տարածքները։ Այս տարածքներից Քյալբաջարի տեղում (որոշ փոփոխություններով) ձևավորվեց Շահումյանի (Քարվաճառի) շրջանը, իսկ Լաչինի, Ղուբաթլուի և Զանգելանի շրջանները միավորվեցին Քաշաթաղի շրջանի տարածքի մեջ, որ կազմավորվել է 1993 թ. դեկտեմբերի 2-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ[1]։

Սկսած 1992 թ-ից սպորադիկ, իսկ 1994 թ-ից՝ ՀՀ կառավարության ղեկավարությամբ մեկնարկել է գերազանցապես ՀՀ բնակավայրերից դեպի Քաշաթաղի շրջան բնակչության վերաբնակեցումը։ Այս գործընթացի արդյունքում շրջանում հիմնվել են շուրջ 100 նոր գյուղեր և 4 նոր քաղաքներ։ 2000-ական թվականների սկզբից, պայմանավորված մի կողմից ՀՀ-ում բնակչության կենսամակարդակի ընդհանուր բարձրացմամբ և տնտեսական վերելքով, մյուս կողմից՝ նաև քաղաքական սերնդափոխությամբ, վերանայվում են վերաբնակեցման գործընթացի հանդեպ ռազմավարական մոտեցումները, ծայր է առնում նոր վերաբնակիչների նկատելի արտահոսք դեպի բնակության հին վայրեր։ Հետագա տարիներին զանգվածային վերաբնակեցման գործընթացը հիմնականում փոխարինվել է «կետային» լուծումներով, այն է՝ ըստ տեղերում առկա որակավորված մասնագետների պահանջարկի թիրախային հրավերների[2]։

2020 թ. Արցախյան երրորդ պատերազմի (սեպտեմբերի 27-նոյեմբերի 9) արդյունքում ստորագրված ՀՀ-ՌԴ-ԱՀ ղեկավարների եռակողմ գրավոր հայտարարության հետևանքով այս տարածքներն ամբողջությամբ անցել են ադրբեջանական զինված ուժերի ժամանակավոր վերահսկողության տակ, իսկ բնակչությունը ենթարկվել է էթնիկ զտման և բռնի տեղահանության։

---

[1] Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության պետական կոմիտեի որոշում, հ. 335, 3 դեկտեմբերի 1993 թ., Ստեփանակերտ, ԱՀ կառավարության արձանագրային բաժնի արխիվ։

[2] Այս տրամաբանությամբ վերաբնակեցման գործընթացը շարունակվել է մինչև 2020 թ. նոյեմբերի 9-ի՝ ՀՀ-ՌԴ-ԱՀ ղեկավարների եռակողմ գրավոր հայտարարության արդյունքում Ադրբեջանի զինված ուժերի կողմից նշված տարածքների ժամանակավոր օկուպացիան։

ՀՈԴՎԱԾԻ ՆՊԱՏԱԿԸ, ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն հոդվածի նպատակն է վերհանել Քաշաթաղի շրջանի վերաբնակեցման առաջին փուլում (1992-2004 թթ.) պետական տարբեր մակարդակի ագենտների[1] դերակատարությունը, ինչպես նաև նրանց վարքը պայմանավորող առարկայական միջավայրային գործոնները: Սույն հոդվածի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից շրջանում ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրության, ինչպես նաև հայկական երկու հանրապետությունների ժողովրդագրական և տարածքային զարգացման քաղաքականության գիտահենացման հրամայականներով: Բացի հիշատակված կիրառական նշանակությունից՝ հոդվածի արդիականությունը պայմանավորված է նաև բուն գիտական ճանաչողության տեսանկյունով՝ հաշվի առնելով, որ նորանկախ Հայաստանի պատմության ամենաուշագրավ ժողովրդագրական գործընթացներից մեկը տակավին հանգամանորեն ու համակողմանիորեն ուսումնասիրված և խնդրայնացված չէ[2]:

---

[1] «Ագենտ» բառը սույն հոդվածում կիրառված է քաղաքագիտական տեսությունից քաղված իմաստով, այն է՝ սուբյեկտ, որ օժտված է համապատասխան ունակությամբ, կարողությամբ և ցանկությամբ՝ ազդելու դեպքերի ընթացքի վրա և հարուցելու նոր դեպքեր (**Coole Diana**, “agency”, *Encyclopedia Britannica*, Invalid Date, https://www.britannica.com/topic/agency-political-theory (հղվել է 28.08.2022 թ.)):

[2] Այս պահին վերաբնակեցման և/կամ վերաբնակիչների վերաբերյալ սեղանին առկա աշխատանքների՝ գրեթե սպառիչ ցանկը հետևյալն է՝ **Դաբաղյան Ա.**, **Գաբրիելյան Մ.**, ԼՂՀ և ազատագրված տարածքներում վերաբնակեցման գործընթացների մասին, *Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը / ժողվածու*, Երևան, 2-րդ, լրամշակված հրատարակություն, 2006 թ., էջք 326-335; **Դաբաղյան Ա.**, **Գաբրիելյան Մ.**, Շուշին 1992-2002 թթ.: հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազգագրական ակնարկ), Երևան, 2004 թ., 96 էջ; **Շաբունց Գ.**, Վերաբնակեցման խնդիրների կարգավորման ուղիները Արցախի Քաշաթաղի շրջանի հարավում (Բարկուշատ գյուղի օրինակով). գիտագործնական վերլուծություն, *Գիտական Արցախ, №2(3)*, Երևան, 2019 թ., էջք 401-406; **Եազճեան Գ.**, Հրաւէր դէպի Արցախ, Հալէպ, *հրատարակիչ՝ Թորոս Թորանյան*, 2003 թ., 32 էջ; **Էլբակյան Է.**, Վերաբնակեցման գործընթացը. հայացք քսանամյա հեռավորությունից, *«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ*, 31.10.2015 թ.; **Սահակյան Հ.**, **Մեջլումյան Ա.**, Բերձոր: Նոր համայնքային ինքնության կայացումը, Երևան, *ԵՊՀ հրատ.*, 2012 թ., 76 էջ; **Կարապետյան Բ.**, Երկխոսություն Քարվաճառի ճանապարհին, Երևան, 2003 թ., 191 էջ; **Balayan A.**, **Gakavian A.**, **Mejlumyan A.**, Repopulation in Kashatagh and Shahumyan in *The Depopulation Crisis in Armenia*, Yerevan, 2013 թ., էջք 63-78; **Элбакян Э.**, Механизмы социальной адаптации послевоенных переселенцев в Нагорно-Карабахской Республике (1995-2005), *доклад на конференции «Динамика этнокультурных процессов: этнография в действии» в институте истории Санкт-Петербургского государственного университета*, 19 апреля 2019 г.:

Տվյալ հետազոտության տեսական շրջանակը հենվում է Էմիլ Դյուրկհայմի մշակած սոցիալական փաստերի տեսական սահմանման վրա: Ըստ վերջինիս՝ սոցիալական փաստերը հանդիսանում են կենսագործունեության, մտածողության և զգացմունքների ընդհանրացված ձևեր, որոնք անկախ են հասարակության առանձին ներկայացուցիչների անձնական և հոգեբանական որակներից[1]: Է. Դյուրկհայմը համարում էր, որ թեպետ պարտականությունները, արժեքներն ու հավատալիքները կարող են թվալ անձնական՝ վերոնշյալ սոցիալական փաստերը գոյություն ունեն հասարակական մակարդակում և ծագում են հասարակական հարաբերություններից: Նրանք գոյություն ունեն հասարակական փոխշփումների և տևական ժամանակահատվածում պատմական բնազարգացման արդյունքում: Անհատը սովորում է այդ սոցիալական փաստերը, ոչ թե հաստատում դրանք[2]: Ըստ այս տեսական ըմբռնումների՝ փորձ ենք արել առհասարակ վերաբնակեցման գործընթացի ծավալումը, ինչպես նաև վերաբնակիչների տեղափոխության մոտիվը բացատրել այն ժամանակվա տիրապետող սոցիալական փաստերի համաշարում: Տեսական նման մոտեցումը թույլ է տալիս առաջին հերթին վերհանել մեծ և փոքր ինստիտուտների և պետական ագենտների դերը վերաբնակեցման և նոր տարածքների յուրացման գործում:

Վերոնշյալ սոցիալական փաստերի համակողմանի վերհանման և բացատրման համար օգտվել ենք սոցիալական գիտությունների առաջնային որակական մեթոդներից, մասնավորապես՝ խորքային հարցազրույցներից (in-depth interview) և բնական զրույցներից[3] (naturally occurring talks), որոնք թույլ են տալիս՝ հասկանալու վերաբնակիչների կամքից անկախ գոյություն ունեցող սոցիալական փաստերը, դրանց շուրջ գործընթացի պատասխանատուների ընկալումները և համապատասխան քաղաքականության մշակումն ու կենսագործումը: Այսպիսով՝ ընտրված մեթոդների միջոցով ստացված էմպիրիկ տեղեկությունները թույլ են տալիս վալիդացնելու մեր կողմից առաջ քաշված տեսական հիմնադրույթները:

---

[1] **Durkheim Émile**, Les Règles de la méthode sociologique, septième edition, Paris, 1919 թ., էջ 186:

[2] Տե՛ս նշված աշխատությունը, ինչպես նաև **Hadden Richard**, Sociological Theory: An Introduction to the Classical Tradition, *Broadview Press*, Peterborough, 1997 թ., էջ 104:

[3] Բնական զրույցները տեղի են ունեցել հեղինակների՝ Քաշաթաղի շրջանում մշտական բնակության ժամանակահատվածում (Է. Էլբակյանի դեպքում՝ 2019-2020 թթ., Վ. Գեղամյանի դեպքում՝ 2000-2007 թթ.) և չեն ձայնագրվել: Խորքային հարցազրույցներն իրականացվել են Է. Էլբակյանի կողմից՝ նշված ամսաթվերին, և ձայնագրվել են՝ ունենալով հարցազրույցյալների հստակ արտահայտված բանավոր համաձայնությունը:

ՎԵՐԱԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

Ցանկանալով սույն հոդվածի տեսական շրջանակներում պատասխանել, թե «ինչո՞ւ և ո՞վքեր էին վերաբնակվում» նոր ազատագրված տարածքներում հարցին՝ անհրաժեշտ է քննության առնել այն սոցիալական փաստերը, որոնք, անկախ ապագա վերաբնակիչների կամքից, ձևավորում էին տվյալ ժամանակահատվածի պայմաններն ու միջավայրը: Ինչպես ցանկացած զանգվածային վերաբնակեցման ծրագիր, Քաշաթաղի վերաբնակեցումը ևս հետևանք էր պետական նպատակաուղղված քաղաքականության, որով սահմանվում էին վերաբնակիչներին ներկայացվող պայմանները, թիվը, թողունակությունը: Պետության՝ որպես գլխավոր ագենտի դերակատարումից զատ, դեր էին խաղում նաև առարկայական միջավայրի իրողությունները, որ նախորդել էին վերաբնակեցման գործընթացի մեկնարկին և/կամ ընթանում էին դրան զուգահեռ:

Այսպես՝ պետականորեն ի սկզբանե նպատակ կար վերաբնակեցնելու միայն Լաչինի մարդասիրական միջանցքը[1], այն էլ՝ փախստականներով նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ի օկուպացված տարածքներից: «*Փախստականները շատ չէին, բայց [վերաբնակիչների] կատեգորիա էին: Մարտակերտի արևելյան շրջաններից՝ Չայլուից* (Այգեստան – Է.Է., Վ.Գ.) *եկան, ապրեցին, Շահումյանից, ովքեր Ղարաբաղում կամ Հայաստանում վատ էին տեղավորվել, ու դեմ չէին Ղարաբաղում ապրելու, բայց մնացած տեղերում քայքայված վիճակ էր, բայց մեզ մոտ գալիս էին: **Մի պահ փորձում էինք միայն փախստականներ*** (ընդգծումը մերն է – Է.Է., Վ.Գ.), *բայց հետո տեսանք՝ ժողովուրդը* (ոչ փախստականները – Է.Է., Վ.Գ.) *գալիս էր*»,- հաղորդում է Քաշաթաղի շրջանի վարչակազմի առաջին ղեկավար, վերաբնակեցման նախաձեռնող Ալեքսան Հակոբյանը[2]: Ինչ վերաբերում է թե՛ իշխանությունների, թե՛ բնակչության կամքից անկախ գոյություն ունեցող իրակություններին, որոնք խթանում էին վերաբնակեցումը, ապա դրանք գերազանցապես կապված էին նախկին հասարակարգի և պետական կենսագործունեության խաթարման և դրա արդյունքում նոր երևան եկած սոցիալական փաստերի հետ, որոնց շարքում էական են ապաարդյունաբերականացումը, երկրաշարժի հետևանքով աղետի գոտու առաջացումը, հողի սեփականաշնորհումը և դրա հետևանքով տնտեսական տեսանկյունից հողային ֆոնդի փաստացի փոշիացումը: «*Երկրորդ կատեգորիան փոքր քաղաքների բնակչությունն էր, որ եկել էր քաղաք, բայց արդյունաբերություն չկար, պետք էր գյուղում աշխատել՝ ընտանիք*

[1] Այս մասին տե՛ս ստորև:

[2] Խորքային հարցազրույց Ալեքսան Հակոբյանի հետ, Երևան, 25.10.2018 թ.:

պահելու համար: Հայաստանում 1992-1993 թթ. [հողի] սեփականաշնորհումն արված էր, հողերը քիչ էին, մարդիկ հաճույքով գալիս էին մեզ մոտ»[1]:

Բացի վերաբնակիչների սոցիալական կարգավիճակի սահմանումից, որ, ինչպես տեսանք, մասամբ իրականացնում էր պետությունը, սահմանվում էր նաև այն աշխարհագրական տարածքը, որտեղից կարող էին գալ վերաբնակիչները: Այստեղ հաշվի էին առնվում մնացյալ տարածքների անվտանգային և ժողովրդագրական ցուցանիշներն ու մարտահրավերները: «*Գորիսից, Սիսիանից, Կապանից շատ դժվարությամբ էինք [վերաբնակեցում] անում, որ սահմանային բնակավայրերը չթուլացնենք*»,- հաղորդում է 1995 թ-ից Քաշաթաղի շրջանի վարչակազմի վերաբնակեցման վարչության պետ, 2020 թ. սեպտեմբերի 27-ի դրությամբ վարչակազմի աշխատակազմի վերաբնակեցման և տեղական ինքնակառավարման բաժնի վարիչ Ռոբերտ Մաթևոսյանը[2]: Ելնելով երկրի մարտահրավերների սեփական սահմանումներից՝ կարող էին կայացվել նաև պարագայական (ad hoc) որոշումներ: Այսպես՝ բազմամարդ գյուղերի կամ ընտանիքների դեպքում, որտեղ առկա էր բնակֆոնդի խնդիր, անգամ սահմանամերձ գյուղ լինելու պարագայում (դիցուք՝ Անգեղակոթ) դեպի Քաշաթաղ տեղափոխումը թույլատրվում էր[3]:

Վերաբնակիչների, դեպքերի ականատեսների ու այլ մասնակիցների հետ բնական զրույցների ընթացքում ի հայտ է գալիս այն հանգամանքը, որ պոտենցիալ վերաբնակիչների աշխարհագրական ծագումից զատ՝ պետական ագենտների կողմից չգրված կերպով սահմանվում էին նաև վերաբնակիչների անձնաբնտանեկան և սոցիալական չափանիշները: Ըստ որոշում կայացնողների պատկերացումների[4]՝ փորձ էր արվում սահմանելու այնպիսի չափանիշներ, որոնք թույլ կտային ունենալ կայուն վերաբնակեցում և վերաբնակիչների առավելագույն կապվածություն նոր տարածքի հետ: Նոր տարածքների կենսունակությունն ապահովելու, պե-

---

[1] Նույն տեղում:

[2] Խորքային հարցազրույց Ռոբերտ Մաթևոսյանի հետ, Երևան, 23.12.2018 թ.:

[3] Նույն տեղում:

[4] Առանձին քննության ու բաց բանավեճի առարկա է տվյալ պատկերացումների գիտահենության և գիտական մշակվածության աստիճանը: Այսպես՝ ենթադրվում էր, որ հեռու վայրերից եկածներն ավելի կայուն արմատ կգցեն նոր տարածքներում, քան Սյունիքի մարզից եկածները, որոնց համար նոր տարածքները հաճախ ընկալվում և օգտագործվում էին որպես «դաչա»: Պատմական փորձը, սակայն, ցույց է տալիս, որ գյուղատնտեսական զբաղմունքի վերաբնակիչների շրջանում ավելի շատ հաջողում են նրանք, որ գալիս են ավելի մոտ տարածքներից (ամերիկյան «վայրի արևմուտքի» յուրացման օրինակի համար տե՛ս Homestead Act, HISTORY.COM, 09.11.2009, https://www.history.com/topics/american-civil-war/homestead-act (հղվել է 28.08.2022 թ.)):

տական ենթակառուցվածքները կայացնելու համար աստիճանաբար որոշում կայացվեց «սովորական» մարդկանցից զատ՝ վերաբնակեցնելու նաև մտավորականների, վարչական աշխատողների, առանց որոնց հնարավոր չէր հատկապես քաղաքաստեղծման աշխատանքը[1]: Անձնաընտանեկան հանգամանքների դեպքում ևս փորձ էր արվում հաշվի առնել այն գործոնները, որոնք կնպաստեին նոր տարածքում վերաբնակիչների երկարաբնակությանը: Ընտրության մի ծայրում ամբողջական ընտանիքներն էին (հայր-մայր-երեխա(ներ)), որոնք կարող էին ներգրավվել նորաբնակ տարածքների հասարակական-տնտեսական կյանքի ամբողջ շղթայում («աշխատանք-մանկապարտեզ-դպրոց»), մյուս ծայրում սոցիալական մերժման[2] ենթարկված անձինք, որոնք չունեին կայուն սոցիալ-հոգեբանական և տնտեսական կապվածություն նախորդ բնակության շրջանի հետ: Ըստ հղացման՝ այլընտրանքի բացակայության պայմաններում նշված սոցիալական տիպի մարդիկ ամուր կկառչեին նոր տարածքներին՝ նպաստելով վերաբնակեցման գործընթացի կայունությանը[3]:

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՈՒՐՋ

Ինչպես վերը նշվեց, Քաշաթաղի շրջանը 1993 թ.-ին ստեղծվել է ԼՂՀ ԳԽ նախագահության կողմից, իսկ 1994 թ.-ից վերաբնակեցման գործընթացը պետականորեն իրականացվել է ՀՀ-ի կողմից: Այսպես՝ 1994 թ. փետրվարի 7-ին ՀՀ կառավարությունն ընդունել է 30 կետից բաղկացած «ԼՂՀ Քաշաթաղի շրջանի վերաբնակեցման ծրագրերի մասին» համար 68գ գաղտնի որոշումը: Ըստ որոշման՝ բնակեցման էին ենթակա միայն Լաչինի մարդասիրական միջանցքի վրա գտնվող և վերջինիս հարող բնակավայրերը՝ Աղավնո, Ծիծեռնավանք, Սուս, Բերձոր, Ծաղկաբերդ: Հետագայում՝ արդեն 1995 թ. սկսած՝ այս որոշումը փաստացիորեն շրջանցվեց և աստիճանաբար բնակեցվեց հյուսիսից հարավ Քաշաթաղի

---

[1] Խորքային հարցազրույց Ալեքսան Հակոբյանի հետ, Երևան, 25.10.2018 թ.:

[2] Սոցիալական մերժման մասին գիտահանրամատչելի ամփոփ նյութ տե՛ս **Kirsten Weir**, The pain of social rejection, *Monitor on Psychology, Vol. 43, No. 4*, 2012 թ., էջ 50:

[3] Այս հարցի շրջանակներում տեղին ենք համարում մեջբերել մեր հարցազրույցյալներից մեկի այլաբանական խոսքերը, որ իր ցանկությամբ թողնում ենք անանուն. «*Հաճախ մտածում էին, որ ճիշտ կլինի վերաբնակեցնել «չորրորդ կնոջ հինգերորդ ամուսնուն», որ հաստատ մնար, ուրիշ գնալու տեղ չունենար*»: Ինչպես նշել ենք վերաբնակեցման գործընթացի համաշարում այսօրինակ մոտեցումը, այսինքն՝ երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակադրումների, վերաբնակիչների քանակի և որակի հարաբերակցությունը բաց բանավեճի առարկա է և կարոտ է սոցիոլոգիական, պատմական և ժողովրդագրական հետագա միջգիտակարգային ուսումնասիրության:

շրջանի ամբողջ տարածքը: Հասկանալու համար նույն վարչակարգի օրոք ընդունված որոշման շրջանցումն այդ նույն վարչակարգի ներկայացուցիչների կողմից՝ հարկ է ուշադրություն դարձնել երկու առանցքային գործոնների, որոնց քննությանը կանդրադառնանք ստորև՝ իշխող էլիտայի ոչ միատարրությունը և իշխանական հարաբերությունների բազմամակարդակայնությունն ու դրանով հանդերձ կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում տարամիտվելը:

Իշխող էլիտայի ոչ միատարրությունն ուներ շատ պարզ բացատրություն: Այդ էլիտան իր բնույթով հեղափոխական էր, ինչը ենթադրում է ձևավորման և գոյացման շրջանում միևնույն ուժի մեջ հասարակական ամենատարբեր շրջանակների հայացքներն արտահայտող անձանց միավորում՝ հանուն հին համակարգի (այս դեպքում՝ խորհրդային/կոմունիստական) դեմ արագ հաղթանակի: Ինչպես այդ հաճախ է լինում հեղափոխություններից հետո, այս դեպքում ևս վերջինիս հաջորդեց ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պատերազմ[1], որի ընթացքում ևս անհրաժեշտ էր ապահովել իշխող էլիտայի շարքերի բազմազանություն՝ որպես հանրային ցածր լեգիտիմության պայմաններում էլիտայի համախմբման միջոցով իշխանական հենարանն ապահովելու միջոց, ինչն առհասարակ բնորոշ է նոր կայացող պետական համակարգերին[2]: Ըստ որում՝ հայացքների տարամիտումը վերաբերում էր բոլոր հիմնարար հարցերին, այդ թվում՝ խոսքի առարկա տարածքների ճակատագրին: Մեկ էլիտայի շրջանակներում համատեղ գոյատևում էին հավաքական Վազգեն Սարգսյանը, որ համարում էր, որ «*… Օմարի զագաթին կանգնած զինվորը … Երևանն է պաշտպանում: Մեր հայրենիքը, ցավոք, այնքան փոքր է, որ մեկ նորմալ պարտությունը ոչ թե Ստեփանակերտն է տակովը անելու, այլև Զանգեզուրն ու Սևանը*»[3], և հավաքական Հրանտ Բագրատյանը, որ որպես վարչապետ՝ 1994 թ.-ին՝ պատերազմից անմիջապես հետո, հրաժարվում էր բյուջետային ֆինանսական միջոցներ հատկացնել Շահումյանի շրջանում Եղեգնուտ-Քարվաճառ ճանապարհի հողալցման և բարեկարգման համար՝ պատճառաբանելով, թե «*մենք էդ հանձնում ենք*»[4]:

---

[1] 1900-2015 թթ.-ին տեղի ունեցած 20 հեղափոխություններից 17-ը (85%) առաջ է բերել արտաքին ներխուժում և պատերազմ (**Lachapelle Jean, Levitsky Steven, Way Lucan, Casey Adam**, Social revolution and authoritarian durability, *World Politics*, 2020 թ., էջք 10-11)):

[2] **Higley John, Burton Michael**, The Elite Variable in Democratic Transitions and Breakdowns, *American Sociologica l Review, 54, 1*, 1989 թ., էջք 17–32:

[3] Վազգեն Սարգսյանի նամակը Լևոն Տեր-Պետրոսյանին, 01.10.1997 թ.՝ տպագրված «Առավոտ», 09.05.2001 թ.:

[4] Խորքային հարցազրույց ԼՂՀ ՊՊԿ նախագահի առաջին տեղակալ Բորիս Առուշանյանի հետ, 23.07.2020 թ., Ստեփանակերտ:

Հենց այս հակոտնյա պատկերացումները, ներիշխանական հարաբերություններում դրանց հաղորդակցումն էլ ծնունդ էին տալիս ինքնուրույնության որոշակի պաշար ունեցող տարբեր մակարդակի ագենտների կողմից պարագայական որոշումների կայացմանը: Ուշագրավ օրինակ է Հակարի գետի ձախափնյա Այգեհովիտ, Այգեկ, Գետամեջ գյուղերի վերաբնակեցման պատմությունը: «*Ջերևացող սահման կար գծված, ասում էին՝ «սրանից այն կողմ վերաբնակեցում չի կարելի անել», իբրև թողել են բանակցությունների համար* (նկատի ունի որպես բանակցային փոխզիջման առարկա – Է.Է., Վ.Գ.)*: Այգեգեհովիտ [գյուղում] ու դրանից ներքև եղեգնաձորցիները շատ էին, ես խառնեցի գետի ձախ ու աջ ափերը, ասեցի Ալեքսան [Հակոբյան]ին՝ «ընտանիքներ կան Եղեգնաձորից», ասեց՝ «դե աջը կարող ես, ձախը չի կարելի»: Դա 1996 թ. էր: Մի շաբաթ հետո իմացավ, որ կողմում են մարդիկ, եկավ ասեց՝ «էս ի՞նչ ես արել»»*[1]: Իշխող էլիտայի ներսում միասնական կարմիր գծերի թույլ արտահայտվածությունը և տվյալ հարցով արտաքին ճնշման թուլությունը կամ բացակայությունը՝ որպես սոցիալական փաստեր, իշխանական հարաբերություններում ներառված ամենատարբեր ագենտների համար, իրենց կամքից անկախ, գործողության լայն ասպարեզ էին բացում:

Ինչ վերաբերում է իշխանական հարաբերությունների բազմամակարդակայնությանը, ապա ինչպես ցանկացած նոր տարածքի յուրացում, Քաշաթաղի վերաբնակեցումը ևս ներառում էր իշխանական և ուժային հստակ փոխառնչություններ և պայքար: Այսպես՝ իշխանության համար պայքարում նոր ազատագրված տարածքների յուրացման առաջին փորձը Լաչինի մարդասիրական միջանցքի ազատագրումից անմիջապես հետո արվել է Ազգային ինքնորոշում միավորում կառույցի և վերջինիս ղեկավար, ՀՀ ԳԽ պատգամավոր Պարույր Հայրիկյանի կողմից: 1992 թ. հուլիսի 29-ին Հոչանց գյուղին մերձակա հարավարևմտյան բլրի հատվածում շրջափակման մեջ ընկնելով՝ ԱԻՄ-ականները տվեցին շուրջ 20 զոհ, որից 2-ը՝ կանայք՝ մանկավարժ և բանաստեղծուհի Ալվարդ Վարդանյանը և Աղավնի Տեր-Ստեփանյանը[2]: Ըստ նախնական հղացման՝ խումբը պետք է օգներ փախստականներին բնակություն հաստատելու «Աիմավան-6» կոչված վայրում (Հոչանց), և այդ նպատակով բերվել էին նաև մանկավարժներ: Հետագայում ոչ մեկ անգամ ԱԻՄ առաջնորդ Պ. Հայրիկյանը տեղի ունեցածում մեղադրել է այն ժամանակվա պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին, որն իբրև թե դիտմամբ ցանկանում էր միջանցքը

[1] Խորքային հարցազրույց Ռոբերտ Մաթևոսյանի հետ, Երևան, 23.12.2018 թ.:

[2] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ. Զուր չէին հերոսների պայքարն ու հերոսացումը, 09.01.2020 թ., https://armenpress.am/arm/news/1000941.html (հղվել է 28.08.2022 թ.):

հանձնել թշնամուն, որպեսզի «Հայրիկյանի գյուղերը» վերանան[1]։ Մի կողմ թողնելով այդ մեղադրանքի ստահոդ լինելը և այդ շրջանում ադրբեջանական ագրեսիայի ծավալի՝ ռազմական ուժերի՝ ի վնաս մեզ 1:9 հարաբերակցությամբ պայմանավորված լինելը[2]՝ արձանագրենք, որ վերաբնակեցումը, այն է՝ տարածքի յուրացումը «սեփական» բնակչությամբ համարվում էին իշխանության և ազդեցության համար պայքարի էական գործիք։ Հենց Հոչանցի ողբերգության օրը՝ հուլիսի 29-ին, նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ստորագրել է հրամանագիր, որով Պ. Հայրիկյանը նշանակվել է Գորիս քաղաքի և Գորիսի շրջանի արտակարգ դրության պարետ[3]։

Ինչպես նշեցինք, վերաբնակեցման շուրջ իշխանական հարաբերությունները դրսևորվում էին տարբեր մակարդակներում։ Ամենաբարձր մակարդակը ՀՀ-ԼՂՀ մակարդակն էր։ Այսպես՝ չնայած շրջանն Արցախի կազմում էր՝ ընդհուպ մինչև 2002 թ. ֆինանսավորումն իրականացվում էր ՀՀ-ից։ Համապատասխանաբար ֆինանսական հաշվետվությունը ևս ներկայացվում էր ՀՀ-ին, իսկ վարչականը՝ Արցախին։ 2002 թ-ից ֆինանսավորումը ևս սկսել է իրականացվել Ստեփանակերտից[4]։ Այս գործընթացն իրականացվում էր ոչ թե «ինքն իրեն», այլ ավելի մեծ իշխանական պայքարի համաշարում, որ արձանագրվել էր Երևանում 1998 թ-ին։ Այստեղ տեղի ունեցած իշխանափոխությունից և Ռոբերտ Քոչարյանի իշխանագալությունից հետո ձևավորվում էին ինստիտուցիոնալ նոր հարաբերություններ, ընթանում էր պետականության շարունակական հանրակարգայնացում, որում Քաշաթաղն իր ոչ ստանդարտ կարգավիճակով և ՀՀՇ-ական ղեկավարով ընկալվում էր որպես արտահամակարգային։ 2004 թ-ին Ա. Հակոբյանի պաշտոնանկությանը հաջորդեց շրջանից մոտավոր հաշվարկներով 3000-5000 մարդու արտահոսք[5], որոնք իրենց սոցիալ-տնտե-

---

[1] Վերջին անգամ այդ մեղադրանքն ավելի մեղմ ձևով Պ. Հայրիկյանը հնչեցրել է ս. թ. հուլիսի 29-ին (Աղավնոյում տներ կան, որ ինքս եմ սարքել, ցավալի է, որ մի ողորմելու պատճառով կորցնում ենք. Հայրիկյան, *NEWS.am*, 29.07.2022 թ., https://www.youtube.com /watch?v=rN0YROmXx4U (հղվել է 29.08.2022 թ.))։

[2] Խորքային հարցազրույց ՊՊԿ անդամ, Ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի նախագահ, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հետ, 18.02.2020 թ., Երևան։

[3] ՀՀ նախագահի հրամանագիրը Գորիս քաղաքում և Գորիսի շրջանում արտակարգ դրության պարետ նշանակելու մասին, ՆՀ-138, ՀՀԳԽՏ 1992/14, 29.07.1992 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=2030 (հղվել է 29.08.2022 թ.)։

[4] Խորքային հարցազրույց Ալեքսան Հակոբյանի հետ, Երևան, 25.10.2018 թ.։

[5] 2005-2006 թթ. գրանցվել է Քաշաթաղի բնակչության թվակազմի՝ 2020 թ. պատերազմին նախորդած պատմական մինիմումը՝ 6000-7000 (Խորքային հարցազրույց Ռոբերտ Մաթևոսյանի հետ, Երևան, 23.12.2018 թ.)։ Հետագայում մարդիկ սկսեցին հետ վերադառնալ՝ նախապատերազմական շրջանում Քաշաթաղի բնակչության դե-ֆակտո թիվը հասցնելով 12000-ի (նույն տեղում)՝ շուրջ 3000 ընտանիք («ՍՈՑՀԱՐԹԱԿ» 15.11.2019,

սական կացության բարելավումը կապում էին կա՛մ անձնապես Ա. Հակոբյանի, կա՛մ նրա մարմնավորած իշխանության հետ[1]։ «Քաշաթաղյան հեղափոխությանը» հաջորդած վարչակարգերը, փորձելով ազատվել «նախկին ժառանգությունից», դիմեցին վարչական կտրուկ փոփոխությունների, որոնց շարքում ամենաէականը Քաշաթաղում բնակչության համար էլեկտրաէներգիայի պետական սուբսիդավորման չեղարկումն էր, որ նույնպես պատճառ հանդիսացավ բնակչության արտահոսքի։ Հետագայում, հասկանալով, որ էլեկտրանէներգիայի սուբսիդավորումը վերաբնակեցման քաղաքականության տեսանկյունից օպտիմալ միջոցառում է, ոչ թե նախկին վարչակարգի քմահաճույքը, նոր պատասխանատուները վերականգնեցին ծրագիրը[2]։

Հաջորդ մակարդակը, որում դրսևորվում էին վերաբնակեցման շուրջ իշխանական հարաբերությունները, Բերձոր-Երևանն էր, նույն ինքը՝ իշխող էլիտայի տարբեր օղակները։ Տեղում ձևավորելով նոր տարածք, նոր բնակչություն՝ վերաբնակեցման պատասխանատուները՝ որպես հանրային-քաղաքական հարաբերությունների ագենտներ, շահագրգռված էին իրենց իշխանության հիմքը բաղկացնող տարրերի, այն է՝ հիշատակված տարածքի և բնակչության թվի մեծացմամբ։ Ա. Հակոբյանն այսպես է նկարագրում 1994 թ. փետրվարի 7-ի կառավարության վերոհիշյալ գաղտնի որոշման տարածքային սահմանափակման շրջանցումը. «*Այն ժամանակ մենակ միջանցքն էր թույլատրված բնակեցնել, որոշման մեջ 4 բնակավայր էր՝ Բերձորը չհաշված՝ Աղավնո, Սուս, Ծիծեռնավանք, Ծաղկաբերդ։ Նախկին Լաչինի շրջանի հյուսիսն էլ ներառված չէր, հարավը Ծաղկաբերդով էր փակվում։ Բայց շատ արագ արդեն 1994 թ. ամռանը հասանք Քարվաճառի սարերի տակ՝ Արտաշավի, Վազգենաշեն։ 1995 թ-ից սկսած՝ միանգամից իջանք Արաքսի ափ, օգոստոսի 8-ին Միջնավանը սկսեցինք [վերաբնակեցնել]։ Միջնավանից հետո հետ ենք բարձրացել դեպի Կովական։ Առաջին տարում դեռ նախկին Լաչինի շրջանը չենք հասել դեպի Ղուբաթլուի շրջան, բայց 1995 թ. արդեն անցանք։ Մի 5-6 գյուղ Ղուբաթլուի հյուսիսում որ բնակեցվեց, գնացի՝ Միջնավանի թույլտվութ-*

Արցախի հեռուստատեսություն, 15.11.2019 թ., https://www.youtube.com/watch?v= MgKT-KESBqNc (հղվել է 28.08.2022 թ.))։

[1] Ա. Հակոբյանի՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված պաշտոնանկությունն ուրույն հետք է թողել քաշաթաղցի հնաբնակների շրջանում՝ կոլեկտիվ հիշողության մակարդակում վերածվելով բանահյուսական դրվագի։ Մեզ հետ ունեցած բնական զրույցներում վերաբնակիչներից շատերը, որպես այդ դեպքի նկարագրական խտացում, պատմում էին, որ «*անգամ ավտո չկար, Ալեքսանը շրջադարձից պատահական տրանսպորտով գնաց Երևան*»։

[2] Խորքային հարցազրույց Ալեքսան Հակոբյանի հետ, Երևան, 25.10.2018 թ.։

յուն խնդրեցի Լևոն [Տեր-Պետրոսյան]ից։ Ահագին համոզել եմ, ասում էր՝ «անցնող-դարձողը Պարսկաստանի (Իրանի Իսլամական Հանրապետություն – Է.Է., Վ.Գ.) *սահմանից կտեսնի», ասում էի՝ «դե ոչինչ, ափսոս ա»*»[1]։ Այպիսով՝ կենդանի նյութի հիման վրա ականատես ենք լինում այն տեսական ճշմարտությանը, որ մարդկային հասարակությունները (որպիսին բառիս բուն իմաստով զրոյից ձևավորվում էր Քաշաթաղում) կազմակերպվում են հիերարխիայի և դրա հետ առնչակից ձևակերպերի՝ ուժի (ռեսուրսներ) և կարգավիճակի (հեղինակություն) շուրջ[2]։

Եվ վերջապես իշխանական հարաբերությունների ամենացածր օղակը, որը ոչ պակաս կարևոր դեր էր խաղում Քաշաթաղի վերաբնակեցման գործընթացում, նոր գոյացող երիտասարդ էլիտայի պայքարն էր տարածքի յուրացման համար։ Այդ էլիտան դրսևորվում էր հիմնականում տեղական կազմակերպիչների տեսքով, որոնք, հասկանալով իշխանական հարաբերություններում բերձորյան էլիտայի սեփական շահերը, վերջինիս առաջարկում էին՝ «բնակչություն իշխանության դիմաց» քաղաքական փոխանակություն։ «*Խմբեր որ գալիս էին, առանձին գյուղ էին ուզում, չբնակեցված*»- հաղորդում է Ա. Հակոբյանը։ Այս երևույթի առավել խորքային պատճառները հասկանալու գործում մեզ օգնել է Քաշաթաղի վարչակազմի աշխատակազմի վերաբնակեցման և տեղական ինքնակառավարման բաժնի վարիչի տեղակալ Գևորգ Հովսեփյանի հետ 2019 թ. հունիսին ունեցած բնական զրույցը, որի ընթացքում վերջինս պարզաբանել է, որ շատ էին լինում դեպքեր, որ ՀՀ որևէ փոքր բնակավայրում որոշակի հեղինակություն և իշխանական հավակնություններ ունեցող մարդ հավաքում էր մի քանի ընտանիք և դիմում Բերձորում վերաբնակեցման պատասխանատուներին՝ հայտնելով, որ պատրաստ է այդ ընտանիքների հետ միասին տեղափոխվելու Քաշաթաղ՝ պայմանով, որ իրենց տրամադրվի առանձին գյուղ և նկատի ունենալով, որ այդտեղ ինքն է լինելու գյուղապետ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաշաթաղում վերաբնակեցման գործընթացն ընթանում էր մի միջավայրում, որ բնորոշվում էր ինքնագո և մարդկային կամքից առավելագույնս անկախ սոցիալական փաստերով, այն է՝ ԽՍՀՄ փլուզման արդյունքում պետական դեինստիտուցիոնալիզացիա, երկրի ապաարդյունաբերականացում, հողային ֆոնդի սակավություն և եղածի անհամաչափ

[1] Նույն տեղում։

[2] **Fiske Susan, Dupree Cydney, Nicolas Gandalf, Swencionis Jillian**, Status, Power, and Intergroup Relations: The Personal Is the Societal, *Current opinion in psychology, vol. 11*, 2016 թ., էջք 1-2։

բաշխում, վերաբնակեցման հարցում արտաքին ճնշման ցածր կամ զրոյական մակարդակ: Սոցիալական ինքնուրույն փաստ էր նաև այն, որ խոշոր չափի նոր տարածքի յուրացումը բնականորեն ուղեկցվում էր մինչ այդ գոյություն չունեցող իշխանական հարաբերությունների սկզբնավորմամբ և ծավալմամբ: Մեր քննությունը ցույց տվեց, որ հենց այս սոցիալական փաստերն են պայմանավորել վերաբնակեցման գործընթացի ամբողջ ընթացքը: Կարևոր ենք համարում արձանագրել, որ մեր հետազոտական եզրակացությունները համընկնում են նույնական թեմայով, այն է՝ ամերիկյան «վայրի արևմուտքի» յուրացումը 19-րդ դարակեսին, ամերիկյան գիտական մտքի հետազոտական վերջին արդյունքներին: Դրանցում ևս զանգվածային վերաբնակեցման հետ կապված գործընթացները կապվում են քաղաքական ագենտների և մանավանդ վերաբնակիչների կամքից անկախ գոյացած սոցիալական փաստերի հետ, մասնավորապես՝ վերաբնակիչների նախկին բնակության վայրերի՝ ամերիկյան արևելքի, գերյուրացվածության և առաջացած հողասակավության հետ[1]: Միով բանիվ՝ զանգվածային վերաբնակեցում առաջին հերթին տեղի է ունենում, երբ նախկին վայրերում չկան մնալու հնարավորություններ, և ոչ այնքան, երբ նոր վայրերում կան մնալու հնարավորություններ:

Эдгар Элбакян, Варужан Гегамян, Деятельность государственных агентов в первом этапе переселения населения в Кашатахском районе Республики Арцах (1992-2004 гг.) - В статье исследуется деятельность государственных агентов Республики Армения и Републики Арцах в процессе программы переселения населения в Кашатахском районе Републики Арцах. В рамках теоретических представлений Эмиля Дюркгейма о социальных фактов, определяются те факты, которые способствовали возникновению самого процесса переселения, а также мотивации переселенцев. В числе таких фактов выявляются государственная деинституционализация, которая последовала распаду СССР, деиндустриализация, бедность земельного фонда и несоразмерный делёж оного в результате процесса приватизации, низкий или нулевой уровень внешнего давления в вопросе процесса переселения. Впервые научным способом выявляются те властные отношения, которые возникли в процессе переселения. На основе системного анализа, а также интервью с лицами, принимающие решения, утверждается, что эти властные отношения возникали на государственном, внутриэлитарном, а также локальном уровнях и характеризовались освоени-

[1] **Vandenbroucke Guillaume**, The U.S. Westward Expansion, *International economic review, vol. 49 (1)*, 2008 թ., էջք 81-110:

ем новой территории, где организовывались новая иерархия и связанные с нею корреляты силы (ресурсы) и статуса (престиж). Ссылаясь на последние научные данные из американской науки о процессе заселения американского "дикого запада", отмечается схожость исследовательских результатов, в частности о доминирующем влиянии социальных фактов – демографических, экономических – в возникновении процесса переселения.

Edgar Elbakyan, Varuzhan Geghamyan, Activities of state agents in the first stage of resettlement of the population in the Kashatagh region of the Republic of Artsakh (1992-2004) - This article examines the activities of state agents of the Republic of Armenia and the Republic of Artsakh in the process of the resettlement program in the Kashatagh region of the Republic of Artsakh. Within the framework of Émile Durkheim's theoretical ideas about social facts, those facts are determined that contributed to the very emergence of the resettlement process, as well as the motivation of the settlers. We establish among such facts the state deinstitutionalization ensuing from the collapse of the USSR, deindustrialization, the poverty of the land fund and the disproportionate division thereof as a result of the privatization process, the very low or non-existent level of external pressure connected with the issue of the resettlement process. For the first time in our scholarly literature, power relations that arose in the process of resettlement are revealed. Based on a system analysis, as well as interviews with decision makers, it is argued that these power relations arose at the state, intra-elite, and local levels and were characterized by the development of a new territory, where a new hierarchy and the correlates of power (resources) and status (prestige) was organized.

Ուղարկվել է խմբագրություն 07.09.2022թ.
Գրախոսվել է 19.09.2022թ.
Ստորագրվել է տպագրության 22.09.2022թ.